

# ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՀՈՐ ԴԵՊՔԵՐԸ

ՂԱԶԱՐՈՍ ՍՂԱՑԵԱՆՑԻ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴԻ<sup>1)</sup>

### IV

1870 թւականն է: Այս թւականի սեպտեմբերիցն է սկսում  
իմ գործունէութիւնս ուսուցչական ասպարիզում:

Սարից որ իջանք դիւդ, ես գն սցի քաղաք, յուսալով՝ որ Մա-  
կար սրբազնը կը կատարէ իր տւած խոստումը: Գնացի մօար, բայց  
ընդունելութեան մէջ մի տեսակ սառնութիւն և զգուշութիւն  
դառայ:

Երբ որ պատմեցի Էջմիածնի բոլոր անցքերը և վերջումը յի-  
շեցրի իր խոստումը,—այդ մասին կը խորհենք, ասաց:  
Խնձանից յետոյ Մանկունին գօրեղացաւ, Մուշեղ քահ. հեռաց-  
նել տւեց իր տպարանից, ընկերներիս սիրաշահեց: Մի տարուց յե-  
տոյ Միքայէլին քահանայ ձեռնադրել տւեց և ուղարկեց իրանց գիւղը:  
Նա այլ ևս չէր կարող մնալ Էջմիածնում տկարութեան պատճառով:  
Մովսէսը (Վարդանեան) մնաց իրեւ տպարանապետ, այդուղի էլ ամուս-  
նացաւ: Տպարանից մեծ աշխատանք չունեցաւ Մովսէսը, բայց յար-  
մարութիւն ունեցաւ վերջին պատերազմի ժամանակ մի քանի օդ-  
տաւէտ կապալներ վերցնել, որից այնքան վաստակ ունեցաւ, որ կա-  
րողացաւ իր սեփական տպարանը բանալ Թիֆլիսումը:

<sup>1)</sup> Տես մասն առաջին «Մուլճ» 1893 թ. № 4, 5, 6, 7-8, 9 և 10:

ինձ առաջարկեցին գնալ Ախալցիսա ուսուցչութեան, և ես էլ յանձն առայր

Այդ ժամանակ մենք չունեինք աւանդելի առարկաների համար դասագրքեր, չունեինք մի որ և է օրինակելի և կարգին դպրոց, ամեն ինչ նոր էր սկսում բունել այս ու այնաեղի Դասատութեան համար ինձ տեին չորս առարկայ՝ աշխարհագրութիւն, թւարանութիւն, ազգային և ընդհանուր պատմութիւն։ Գիտութեան առարկաներն էլ սրանք էին, մնացածը լեզուներ էին՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն, այլ և կրօն, երգեցողութիւն և վայելչագրութիւն։ Ուսուցչական ժողովներ չեին լինում, ոչ էլ ուսման ծրադիր ունեին։ Տեսուչը Վարդան Աբովյանցն էր, մի շատ ազնիւ և պատական հայ, բայց իր պաշտօնին շատ անյարմար։

Չորս առարկան շատ շատ էր դորդը նոր սկսող ուսուցչի համար, բայց ես ստիպւած էի վերցնել, որովհետեւ ուրիշ յանձն առնող չկար։ Ես պէտք է սովորածս նորից սովորէի, այն ևս ոչ թէ ինձ համար, այլ ուրիշներին նոյնը հազորդելու համար զիւրին եղանակով։ Այս նախապատրաստութիւնը ինձանից շատ ժամանակ էր խուսում, այլ ևս ազատ ժամանակ չէի ունենում, որ տեսնեմ ինչ են անում և ինչպէս են դասաւորում իմ միւս պաշտօնակիցներս։

Երբ որ իմ նախորոշած չափովն անցայ առարկաներս, սկսեցի կրինել, և այլ ևս դաս պատրաստելու կարեւորութիւն չունէի. այնուհետեւ ազատ ժամերս նւիրեցի միւսների դասերի այցելութեանը աւելի նրա համար, որ ինձ համեմատեմ նրանց հետ, որովհետեւ վախենում էի, թէ մի դուցէ՝ իբրև խամ ուսուցիչ՝ թոյլ լինեմ գտնաւած և յետ մնացած փորձառու վարժապետներից։

Եւ ինչ տեսայ, Տէր իմ Աստւած... Հիմա էլ որ միտս է գալիս միսս սարսում, մազերս վիշաքազւում են։ Այցելութիւնս սկսեցի նախակրթարանից։ Այդ դասարանը բուն ուսումնարանի շէնքից անջատւած էր, ինչպէս անջատւած է լինում դոմը լաւ շէնքերից։ Եւ հէնց զոմի էլ նման էր արտաքուստ, իսկ ներքուստ նման էր խոզանոցի, երբ բազմաթիւ մեծ և փոքր խոզուկներ իրար զլխով ընկնելով՝ որը բրթբրթում է, որը խոխոկում, որը մրթմրթում է, և որն էլ ճղաւում, ճշում։ Անկարգ, անկանոն, ամեն մէկի ձեռ ին մի առանձին զիրք կամ տեսրակ, իսկ վարժապետը մի կատարեալ

վայրենի, իսկ և իսկ խողարած, մի երկայն ճիպոտ ձեռին մէկի զլիին էր խփում, միւսի ձեռներին. Խնքը սարկաւագ էր, տէրտէրի հագուստով, երկայն հասակով ու մօրուքով և մի երկայն դաշնամք գուխաբորի գդակ էլ զլիին, որ դասի ժամանակ ևս չէր վերցնում, վախենալով, որ դատարկ գազաթը ձանձով չցնենի:

Այս պատկերն ունէր ուսումնարանի կրթութեան արմատը, նրա օրօրոցը կամ բոյնը, որտեղ պիտի թեաւորւէին, որ կարողանային թռչել դասարանից դասարան և ոչ թէ խեղդւէին նոյն իսկ բնի մէջ, նոյն իսկ օրօրոցումը: Այդտեղ պէտք էր սիրագորով մօր յատկութիւն և նրա նման սննդաւու կաթով լիքը ստիճանք ունեցող մէկ դաստիարակ կամ գոնէ այդ գաղափարին մերձաւոր մի բան, այլ ոչ երբէք մի հրէց:

Այս արմատից սկսած դէպի վեր բարձրանալով՝ ես հանդիպեցայ նորանոր հրէշների: Ֆրանսերէնի ուսուցիչը շարունակ հարբած էր լինում և գլուխը կորցրած նոյն իսկ դասաւուն մէջ: Խնչ օյիններ և կատակներ ասես, որ աշակերտները չէին խաղում նրա գլմին: Երբ որ ներս էի մտնում ես, իսկոյն թողում էին վարժակետին խաղացողները և շուտով իրանց տեղերում նստում սուս ու փուս, որ ես չտեսնեմ, բայց երեխան բնչպէս կարող է խարել իրանից մեծին, եթէ նա խելքը գլմին մի մարդ է: Մանկավարժի բնագդում, հոտառութիւն ունեցող ուսուցիչը կարող է նկատել և իր առջև չերևող բաները, իսկ երեցածի ամենախորին խորշերը թափանցել: Բոլոր վարժակետների էլ դասաւանդութեան մէջ չկար ոչ հնորութիւն և ոչ նորութիւն, այլ մի այլանդակութիւն: Ո՞վ է լսած կամ տեսած, օրինակ, այսպէս բան: — Իմ ներկայութեան ժամանակ, ոռուսաց լեզւի ուսուցիչը դասն սկսեց բառահարցութեամբ, թէ ոռուսաց այս ինչ բառը բնչպէս պէտք է ասել հայերէն: Աշակերտը մի քանի բառ ասեց ենթադրութեամբ, իսկ վարժակետը պահանջեց, որ նա իմանար: Բայց որտեղից իմանար խեղճը, բոլոր իմացածն էլ մոռացաւ և մնաց ապուշ կտրած: Բոլորն էլ մնացել են սառած: ոչ ով իրաւունք չունի ասելու, որ ինքը գիտէ: Այս վարժակետը միւնոյն ժամանակ և տեսուշ է, աշակերտները նրա իրաւունքից վախենում են և պատկառում: Աշակերտը լուեց, վարժակետը նոյնպէս և այս տեսեց մի ամբողջ ժամ, ամբողջ դասը:

Զանդը տւին և խեղճ՝ աշակերտները այդ մոտառը բանտարկութիւնից գուրս թռան որ մի փոքր ազատ օդ չնեն:

Դպրոցի բարյակտն կողմը ուզես չուզես պէտք է ներդաշնակ լինի մտաւորին։ Մտաւոր կրթութիւն չեղած աեղը ի՞նչ բարյական կրթութիւն կարող է լինել։ Անկարդութիւն, կեզտոտութիւն, սուս-խօսութիւն, ստահակութիւն, ափեղգփեղ գրւածներ զանազան խոր-շերում և բոլորն ել բառ այսմ..

Այս բոլորը տեսնելուց յետով ևս զարմացած էի մասցել, որ այսպիսի մի շրջանում իր դասերի ժամանակ աշակերտներիս մէջ չէի նշմարում՝ որ և է անուշագրութեան նշան, որ և է շարութիւն, ոչ մէկ անգամ չէր պատահում, որ բարկանամ մէկի վրայ, մինչդեռ միւս զասարաններում՝ վարժապեսների տուր ու դրբմփոյի ձախնը մինչև իմ զասարանն էր հասնում և իմ աշակերտների դէմքի վրա՝ նշմարում էի խուլ բօղոքի արտայայտութիւն, կարծես ասում էինք լսում էք, վարժապետ, պաշտպանեցէք մեզ, ազատեցէք մեզ այդ բարբարուներից, մեր յուսը ձեզ վրայ է, տեսէք մենք այնքան յարգում ենք, որքան պատում, ուրեմն մենք վաստակած աշակերտներ չենք, այլ մեր վարժապետներն են վաստ... Ես կարմրում և սպրթ-նում էի այլպիսի բոպէներում, իմ ներքին յուգմունքն անցնում էր աշակերտներիս, որոնց մէջ կային բաւական չափահաս պատանիք և ընդունակ։ Ամենայն օր զգում էի, որ ինձանից մի բան անցնում էր նրանց, նրանց վարակւիլը, նրանց աճելն ու զարգանալը շօշափելի և զգալի էր ինձ համար և ես դրանով մխիթարուած էի։ Ուրախ էի շատ, որ պատմութեան և թւարանութեան դասերն իմ ձեռքս էին, մէկով ներշնչում էի նրանց մէջ իդէալական ձգութմներ, իսկ միւսով՝ զարգացնում նրանց մէջ տրամարանօրէն մոտածել։ Իմ և աշակերտներիս մէջ եղած հոգեկցութիւնն ամուր էր, բնական, սրտանց և անկեղծ։ Միւս միւս վարժապետները իրանց զասարաններից դուրս էին զալիս պատժած և պատժառ, մաղձերը խառնւած, ունքերը կիտած, ես իմ աշակերտներիս հետ դուրս էինք գալիս մեր հոգու ամենալաւ դրամագրութեամբը։ Դասամիջոցին անգամ չէին ուզում գջլել ինձանից, ուզում էին, որ իրանց հետ զրոնեմ և զբոյց անեմ, ի հարկէ մեծերը միայն Տգէտ և անկիրթ ծնողաց զաւակները մի աստվածային պատիժ են իրանց ծնո-

զաց համար: Մնողները այն կարող են հնձել, ինչ որ ցանել են, գսնգատուելու իրաւունք չունին: Այս մի և նոյնը կարելի է ասել և վարժապետների համար: Նրանք էլ ինչ որ ցանեն՝ այն կը հնձեն: Աշակերտի անկարգութիւնը, անուշադրութիւնը, բժամտութիւնը և այլ շատ թերութիւնների հարիւրից 99-ը վարժապետի տւածն է:

Ես մի յօդւած ունիմ գրած պատճի մասին և տպւած է «Դրաբ-րոց» ամսագրում: Նրա մէջ պարզ ի պարզոց ասած եմ, որ աշակեր-տի յանցանքը մեծ մասամբ վարժապետինն է. եթէ պէտք է պատ-ժել աշակերտին, ապա նախ պէտք է պատճել վարժապետին, իսկ սրան էլ պատճելուց առաջ պէտք է պատճել տեսչին կամ հոգա-բարձւին, որ յանցալից վարժապետներ է տել անմեղ մանուկներին:

Ախալցիսայում ես զգացի, որ կոչւած եմ խարազանով սրբել, մաքրել մեր կրթութեան տոմճարները բարոցական աւազակներից: Այս ձգուումը իմ մէջ մինչև վանատիկոսութիւնն հասաւ:

Այդ ժամանակ Ախալցիսայի յաջորդը Պարզեան Սուքիսս վարդա-յետն էր: Սա ուզենալով ուուսերէնից դասեր առնել ինձանից, առաջ-նորդարանում սենեալ տւալ ինձ և սեղանակից արաւ իրան իրեւ վարձարբութիւն իմ աշխատութեան համար: Խնդն արդէն քաջ հայկաբան լինելով հեշտ էր ինձ համար համար համեմատական մեթոզով նրա ուշադրութիւնը դարձնել զլխաւորապէս երկու լեզուի մէջ եղած քերականական տարբերութեան վրայ, որ ինչքան շատ է մեր աշ-խարհիկ լեզուի վերաբերմամբ, այնքան քիչ է զրաբառի հետ համե-մատած: Արդիւնքը հիանալի դուրս եկաւ: Վերջերում առում էր, որ մի բան է թարգմանել և ինձ է նւիրել ի նշան երախտազիտու-թեան: Այդ երախտազիտութեան հաւասարիքը ցայսօր դուրս չեկաւ, բայց ես հաւատում եմ, որ կարող է և դուրս դալ:

Շատ մօտիկ լինել պ Սուքիսսին և յարգւելով նրանից, ես պատ-մում էի դպրոցի թերութիւնները և յորդորաւմ, որ նրա բարեկար-գութեանը հոգ տա՞ւ: Նա ինձ յուսադրում էր, բայց ի դուր: Վարժապետները կապւած էին այնպիսի աղաների հետ, որ դուրս վոնդել ոչ ոք չէր կարող: Իսկ աղաների հոգ չէր, որ ուսումնարանն անկարդ է, իրանք այնտեղ զաւակ չունէին: Կային հոգաբարձուներ, որոնց որդիքը նոյն դպրոցումն էին ուսանում, սրանք շատ էին ցան-կանում դպրոցի բարեկարգութիւնը, բայց առևորական և այլ կապեր

ունենալով աղաների հետ, չէին կարող ձայն հանել: Աղայութեան մասին ես գաղափար չունեի, այդ գաղափարը ես առաջին անգամ Ախալցիսայումն ստացայ քանի մի անգամ հիւրասիրւելով աղաների տանը և տեսնելով նրանց տան նահապետին: Այդուղ միայն ես տեսայ ասիական աղայի տիպը: Երևակայեցէք ձեզ մի ծայրացեղ սա մադուր, և կըստանանք ստիացի աղայի տիպը: Աղան պէտք է լինի մի կուռք, միայն խօսուն, և սէտք է խօսի՝ ինչպէս կը խօսէր կուռքը իր խորամանկ և գործին շատ հմտւ մի քուրմ, առանձին ձայնով և ոճով: Բոլոր ներկայ եղաղները միայն խունկ պէտք է ծխին և զանազան փառաբանութիւններ անեն ձեռները սրտին դրած: Պէտք է նայեն նրա աչք և ունքին, ունքերի պառտելու հետ պէտք է խոր տիպութեան մէջ ընկնեն, և նրա ժամանելու հետ՝ պէտք է քահքան խնդան բարձրաձայն, և այլն և այլն և այլն: Նա մի անմատչելի և անաղորդն բռնակալ է և իր տան մէջ. ով կարող է նրա կամքի դէմ ոչ թէ մի բան ասել, այլ անգամ՝ մտածել: Ախալցիսացոց աղայակաղացութիւնը մինչև անգամ վայրենութեան էր հասնում: Առաջին քարը ևս ձգեցի այդ հոսած լճի մէջ, լիճն սկսեց ալիքներ բարձրացնել և փոքր ինչ հովհարւել: Այս բանը պատահեց այսպէս:

Մէկ անգամ ինձ մօտիկ մի մարդ հարցրեց.

—Պարոն Աղայեանց, ի՞նչպէս էք գոնում մեր ուսումնարանը:

—Նման վատ, պատասխաննեցի կորական:

—Ի՞նչպէս թէ «շատ վատ», այդ ի՞նչ էք ասում:

—Այո, շատ և շատ վատ, մի կատարեալ խոզանց է:

—Իսկ մեր վարժագետները:

—Խոզեր են:

Իմ այս ասածը մի գունդ թթիսմոր էր: Կրանից շաղախեցին մի ահազին խմոր, որից թիւեցին զանազան կարկանդակներ և ուտեցրին ժողովրդին: Եթէ ես մէկն էի ասել, լսողներն աւելացրել էին հարիւրը, բոլորն էլ իմ անունից: Այս բանը այնպէս մեծացաւ, ինչպէս զլորւող ձեռնագունդը, որից ահագին կոյտ շինելով՝ վերջումը մի հրէշի կերպարանք են տալիս վրան պոչ ու գլուխներ աւելցնելով:

Հոգաբարձուները տակն ու վրայ եղան իրանց նախադահի հետ,

կանչեցին տեսչին, որ անյապաղ մի ժողով կազմէ և սովհապէ ինձ, որ ես իմ ասածներս յետ առնեմ և ներողութիւն խնդրեմ:

Ժողովը կազմեց. ներկայ էին բոլոր ուսուցիչները, ամենքն էլ միաձայն և միախորհուրդ, բացի մէկից, որ իմ կողմն էր: Դա մի հայ-կաթոլիկ երիտասարդ էր, բայց մոտաւրապէս աւելի լուսաւորչական էր, քան բուն լուսաւորչական վարժապետները: Մի յառաջարանով տեսուչը յայտնեց ժողովի նախատակը: — Ժողովուրդը յուգւած է ասաց, որովհետև դարոցի վարկը վայր են ձեւ նրա աշքում: Տարաբաղդաբար մեզանից մէկն է արել այդ, և յատկապէս պէ. Աղայեանցը: Հոգաբարձութիւնը ցանկանում է, որ պ. Աղայեանցը յետ առնէ իր ասածները, եթէ իրաւ ինքն է ասել, իսկ եթէ ոչ՝ արդարանայ, ցոյց տայց, որ ինքն այդպէս բան ասած չէ, որ այդ բոլորը զբարտութիւն է: Հիմա խօսքը ձերն է, պէ. Աղայեանց:

— Եատ ուշ էք խօսք տալիս ինձ, պէ. Աբովիեանց: Եթէ նաև քան այս ժողովը՝ կանչած լինէիք ինձ առանձին, ես ձեզ խորհուրդ կը տայի, որ ժողով չըկազմէք, քանի որ ամբողջ տարին ոչ մի ժողով կազմած չէք: Դուք գիտէք, որ քննութիւններն սկսում ենք և արդէն մէկ շաբաթից կը վերջանայ: Քննութիւններից յետոյ՝ սուս ու փուս ինձ կը հեռացնէիք իրրե մի խռովարար մարդու, և ձեր գործը կը շարունակէք ձեր ասածի պէս: Իսկ հիմա ինչ ասեմ: Ինչ որ դուք լսել էք, ես էլ եմ լսել: Այնպէս բաներ են ասում, որ ես նոր եմ իմանում և ինքս չըդիտեմ նրանց սուսն ու ճշմարիտը, բայց այդ հրդեհն ես ինքս եմ գցել, ես եմ վառել:

— Ուրեմն պէտք է յետ առնէք ձեր խօսքը, ձեր ասածը, որովհետև դուք անպատճել էք բոլոր վարժապետներին, վայր էք գցել սրանց վարկը ժողովրդի աշքում, պէտք է այս պարոններից ներաղութիւն խնդրէք:

Այս վարժապետներն սկսեցին գանգատւել, թէ ինչ և ինչ եմ ասել իրանց, որին սրալիսի մականուն եմ տւել...

— Այն, այն, ասել եմ, ասացի և պատրաստ եմ ասածներս մի առ մի ապացուցանել, որովհետև, ձեր երեսին եմ ասում, ես ձեզ վարժապետ չեմ համարում, այլ որին ասուշ և որին զահիմ:

Եւ ակսեցի մէկ-մէկ նկարագրել ամենքին էլ: Երբ հերթը հասաւ ֆրանսերէնի ուսուցիչն, նրան այնպէս ողողեցի, որ ամենքն էլ մոռա-

ցան իրանց ստացած հարւածները: Մինչդեռ ամէնքն էլ չափից զուրս բարկանում էին երբ նկարագրում էի, բողոքում էին, թէ սուտ է բոլորը զրպարատութիւն է, սա միայն բերանն էր զնձրտում և իրրե մի թքաման լուռ ու մունջ տեղաւորում էր րր զլիին բոլոր թուքս ու մաղձս:

—Դուք ասացեք, պարոններ, շարունակեցի ես, սա մարդ է, ունի արդեօք մարդկացին պատւի նշան, եթէ ունի, թողկենաչ և ապտակ զարկէ ինձ, թող գոնէ բողոքէ, բայց սա մի վատահոտ միջատ է, մի բաղլիճ, մի ճիճու ամենավատթար տեսակից... Կարճով էք ասել, որ սուտ է ասածու: Զեր յանցանքը այն է միայն, որ չափից զուրս տգէտ էք և բժժամիտ, :Ըգիտուք, թէ ինչ է սւսումը, ուր մնաց որ իմանաք, թէ ինչ է ուսուցումը. իսկ այս թշւառ արարածը եղել է Խալիսկեան ուսումնարանումը, այնուեղ որպէս թէ աւարտել է իր ուսումը և նրա անունով էլ մուել այստեղ, որ բարոյապէս ապահանէ մեր ուսումնարանը: Արանից կարող էք գուշակել, թէ որպիսի հրէշներ է տեել մեզ Խալիսկեան ուսումնարանը:

Տեսչին չընկարագրեցի, բայց նա ստիպեց, որ իր մասին էլ յայսնեմ իմ կարծիքս, զիտէր, որ իր մասին ես վատ կարծիք չունեմ, մինչև անդամ մի առանձին սէլ էի տածում դէպի ինքը ի պատիւ իր անմահ հօր:

—Դուք ինձ էլ չէք հաւանել, ասել էք, որ ես տեսչութեան անյարմար եմ: Եթէ այլպէս է, հապա ինչու են տեել ինձ այս վկայականները, նայեցէք, և քանիս են, տեսմէք: Այս ասելով վկայականները փռեց սեղանի վրայ, որոնցից շլացան վարժապետները և այնպիսի մի դիրք ցոյց տւին, որ երկում էր, թէ իբր անհնարին էր դրանց դէմ մի բան ասել:

—Խնչու ես ձեզ թողած՝ ձեր թղթերին պէտք է նայեմ, քանի գրոշով կառնեմ ես այդ թղթերը: Ամենացետին ատամնաբոյժը դրանից շատ վկայականներ ունի: Այդ թղթերը կարծող են արդեօք տեսչութիւն անել: Թրւթմ արդեօք ձեր պակասութիւնը իրրե տեսչի, և իբրև ուսուցչի: Ահա ձեր տեսչութեան պտուղները՝ սրանք չեն արդեօք ձեր վարժապետները: Երբ որ սրանց հաւանում և պաշտպանում էք, մնացածն ինքն ըստ ինքեան հասկանալի է: Դուք բարի էք չափից դուրս, բայց անհոդ էք վերին ասաիճանի: Զեր

սրտումը կրակ չըկայ, զուրկ էք ձեր հօր եռանդից, այնու ամենայնիւ, ես կը ցանկացի, որ Հայոց ազգը ոչ թէ ձեզ մանուկներ տար կրթելու, այլ թոշակ տար և վերակացութիւն մի որ և է դպրոցում; Ձեր բարի վարք և բարքով դուք կարողէք բարի օրինակ լինել մշակերտաց համար, իսկ կառավարիչ լինել և այն՝ վերանորոգող, բարեկարգող կառավարիչ, դուք չեք կարող; Եթէ իմ մէջ այրող կրակից գէմ մի կայծ լինէր ձեր սրտում, դուք երկու ձեռքով կը դրկէիք ինձ, իսկոյն կը նկատէիք իմ ձգտումը և կաջակցէիք ինձ; Դուք հաշտուում էք եղածի հետ, թէկուզ վաս լինի, իսկ ես եթէ հաշտէի եղածի հետ՝ այսօր վարժապետ չէի լինիլ և այսպիսի վարժապետներին անպէաք չէի համարիլ; Դուք ձեզ խոհեմ էք համարում, իսկ ինձ անխոհեմ, ձեզ խաղաղասէր էք համարում, իսկ ինձ խոռովարա; Ես ազդ ընդունում եմ, բայց ընդունում եմ ոչ որ ոչս յանցանք կամ թերութիւն, այլ մեծ աբժանաւորութիւն; Մեր ուսումնարանը ախոռ է, ինչու, որովհետեւ վարժապետներն իրանց գործին հմտում չեն, դաստիարակի կոչում չունին, տեսուն անընդունակ է, հոգաբարձուք հոգեբարձ են, իսկ ազդ կարող է այդպէս չը լինել, կարող է անհամեմատ լաւ լինել, որովհետեւ նիւթական պակասութիւն չըկայ, հարկաւոր է միայն որ ժողովուրդն իմանաց եղածի վասութիւնը և լաւագունին ունենալու ցանկութիւն յաջոնէ; Եթէ ժողովուրդը հաւատացել է իմ ասածին և պահանջում է, որ ուսումնարանը բարեկարգւի, փառք և պարծանք նրան, ազդ զաղափար տողին; Ես խոռվարա չեմ, այլ ժողովրդի բարեկամ, մանուկ սերունդի կրթութեան պաշտպան, և յանուն ազդ սուրբ զաղափարին ես բողոքում եմ իմ դէմ կազմած քո այս ժողովի դէմ:

Այս ասելուց յետոյ ես գուրս եկայ ժողովից...

Միւս օրը ժողովրդի իրարանցումը սաստկացաւ: Լսել էին, թէինչ և ինչ եմ ասել ժողովում և մէկը տասը շինելով՝ հաղորդել էին միմեանց: Այդ ժամանակ քաղաքութն էր և Յովակիմ Գեղամեանցը: Ժողովրդի մէջ սա ինձ էր պաշտպանում և ուրիշ կերպ էլ կարելի չէր: Սա զրում էր զանազան շարադրութիւններ և բերում մօտս, որ ես քննադատեմ և մի ուղղութիւն տամ իրան: Երբ մի որ և է դրածի չէի հաւանում, նորից զրում էր ահաղին տեսրակներ և բերում իմ ուղածիս համեմատ գրած: Նակելով իր գրածները մի և նոյն ժա-

մանակ աշխատում էի վարակել իմ գաղափարներով և դիտումներովս և իր մէջ ինքնազործունէութեան և յառաջ զնալու վատահութիւն էի զարթեցնում: Այս էլ էր եղել Խալիսկեան ուսումնարանումը, բայց արտաքսւել էր իրրև ըմբոսա աշակերտ: Այս վակուը նրան բարձրացրեց իմ աչքումը և ոչ թէ ստորացրեց: Ըմբոսա լինել Խալիսկեան ուսումնարանում կը նշանակէ հակւած լինել դէպի լաւը: Բայց որքան լաւ կը լինէր, որ նա այդ ուսումնարանում երբէք եղած չը լինէր: Այսօր դա իր թերի կողմերի համար Խալիսկեան ուսումնարանին է պարտական:

Նարցաքննութիւններն սկսեցին: Ես խնդրեցի տեսչին, որ իմ առարկաներս առաջ զցի, որ շուտ հեռանամ և աղմուկներից ազատւեմ: Նա յօժարութիւն ցոյց տւառ և իմ դէմ չեզոք դիրք բանեց: Բայց վատահամբաւ ուսուցիչները իրանց բոլոր ազգականներով խնամիներով և քաւորներով միացան, որ քննութեան ժամանակ շշկեցնեն աշակերտներին, աշխատեն բանը այնպէս բերել, որ երեայ թէ ես ամենելին ոչինչ չեմ սովորեցրել, որ ես մի շառլատան եմ եղել և ուրիշներին վայր գցելով ինձ եմ ուզել բարձրացնել, իմ թերութիւններն եմ ուզեցել ծածկել: Այս բանն ինձ համար կեանքի և մահու խնդիր էր, հացից պիտի զրկւէին, եթէ չըկարողանացին իմ վարկը ժողովրդի աչքում զցել: Սրանք, ժողովրդի հոգսը քաշելելով, բանի տեղ չեին զրել աշակերտներին, որոնք իմ քաջամարտիկ և անվեհեր զինւորներս էին: Դրանցում կային ոչ միայն շատ ընդունակ, այլ բաւական խոշոր և ուժեղ տղաք: Սրանք երբոր իմացան, թէ իրանց վրայ մի արշաւանք պիտի լինի, մի ասպատակութիւն, թէ այդ բանին յօժար են նոյն իսկ տեսուչն և յաջորդը, երբ տեսան վերջապէս իմ յուզեած և վրդովւած լինելս, եկան ինձ միամուացրին, ասելով:

—Վարժապետ, դուք բոլորովին անհոգ եղէք, բնաւ չըվրդովւիք, մենք ձեր դասերն այնպէս գիտենք, որ մեզ չեն կարող շփոթել, մանաւանդ որ այդ գուեհիկները ձեր ոչ մի առարկացի հոտն անդամ առած չունին, ինչ գիտեն, որ ինչ հարցնեն: Բայց մենք զրանց աւելի լաւ կը պատժենք, իրանց դասերի հարցաքննութեան

ժամանակ կարող ենք ասել՝ ի՞նչ ենք սովորել, որ ի՞նչ պատասխան տանք. «Էէ բան մ'ալ չիտենք»...

—Ո՛չ, ասացի, ազգպէս բան չըսէտք է անէք, դուք չըսէտք է հետեւիք դրանց չարութեանը:

Այս յառաջադէմ աշակերտաներից էր Ստեփան Մալխասեանը: Երբ որ ամեն կողմից յարձակւեցին սրա վրայ, դեռ մէկին չըսպատասխանած միւսն էր հարցնում, միւս կողմից երրորդը, չորրորդը, սա իրան չըկորցրեց և մի այնպիսի պաշտպանողական դիրք բռնեց, ինչպէս մարդ բռնում է մէջքը մի պատի դէմ տալով, երբ վրան յարձակւում են մի խումբկծոտողներ:

—Սպասեցէք, պարոններ, ասաց, ես ձեզ ամենքիդ էլ պէտք է պատասխան տամ, որ չասէք, թէ չըկարաց պատասխանել. միայն թոյլ տւէք, որ նախ մէկին պատասխան տամ, յետոյ միւսին:

—Այժ, այժ, գոշեց ժողովուրդը, ձեզ ով է հարցաքննիչ նշանակել, ինչու չէք թոյլ տալիս, որ ինքը վարժապետը հարցաքննէ:

Ես, տեսնելով, որ աւելորդ եմ, իբրև հարցաքննող, վեր կացայ տեղից և գնացի հարցաքննուող աշակերտաների վերջին նստարանի վրայ նստեցի, ասելով ժողովրդին՝ Ահա ես և մանկունք իմ, քննեցէք, ինչպէս գիտէք:

Հակառակորդներս իրանք գլորւեցին ինձ համար փորած հորի մէջ, խալուառակելով թէ ժողովրդի և թէ աշակերտաների առջև:

Վրդովմունը բարձրացաւ քաղաքացոց մէջ, որոնք կարծես մի առիթի էին սպասում: Հաւաքւեցին պրն. Պտուղեանցի տանը, ինձ էլ հրաւիրեցին այնտեղ, շնորհակալութիւն յայտնեցին, և խնդրիցին որ ես չըհռառանամ:

—Մենք կարձակենք, ասացին, բոլոր վարժապետներին էլ, հոգաբարձուներին էլ, տեսչին և յաջորդին էլ: Դուք կազմեցէք ձեր ուղած խումբը և բարեկարգեցէք մեր գպրոցները:

—Շնորհակալ եմ, ասացի, ձեր համարութեան համար, բայց ընդունել ձեր առաջարկութիւնը՝ չեմ կարող: Այսաեղ կայ մի զորեղ ոյժ, որի տակ ընկճած էք դուք, և թէև այսօր ոտքի էք կանգնել, բայց վաղը գարձեալ կընկճեիք: Իմ հոգսը դուք մի քաշէք. ես հէնց այսօր հեռագիր ոտացայ Ալէքսանդրապոլից, ուր հրաւիրում են ինձ ուսուցչութեան:

Յոյց տըւի Աւետիքիցս (Բաբայեանց) ստացած հեռագիրը, որից աւելի յուզեցին և յորդորեցին ինձ մնալ, բայց ևս մնալ չէի կարող, որովհետեւ այդ կընշանակէր կեանքս ու պատիւս վտանգի տակ դնել:

Այստեղ միջանկեալ ասեմ, որ այս դէպքից տասը տարի անցած՝ ես կրկին գնացի Ախալցիսա, և այս անգամ ոչ իբրև հասարակ ուսուցիչ, այլ իբրև թեմական վերատեսուչ։ Տասը տարւայ մէջ դրաբ-րոցները մասամբ բարեկարգւել էին, բայց ժողովուրդը դարձեալ գոճ ոչ հոգաբարձուներից և ոչ ուսուցչական խմբից։ Մի բողոքագիր տըւին ինձ խուռն բազմութեամբ։ Յիշեցնում էին շատ տարի առաջ իմ արած պահանջներս, և հիմա իրանք էին պահանջում, որ ի կատար ածեմ նոյնը։ Ես խաղաղացրի դրգուած ինդրատոներին, ասելով։

—Այն ժամանակ ես միայն քանդում էի, իմ հոգս չէր թէ ով պէտք է շինէ, բայց որովհետեւ այժմ ես պէտք է լինեմ շինողը, ուստի ինդրում եմ, որ ինձ ժամանակ, որ տեսնեմ ինչ կայ շինելու։

Եւ ես շինեցի, ինչքան հնարաւոր էր. բայց մի տարի միայն անցած Հ. Խորէն Ստեփանէն նշանակւեց յաջորդ՝ միանգամայն նաև տեսուչ ուսումնարանների, թեմական տեսչից անկախ, և նա փոխեց, փոփսիսկ ամեն ինչ։

Ախալցիսայից հեռացայ ես 1871 թւականի ամառը։ Դուբս գալիս բոլոր աշակերտները ետևիցս ընկան երգելով տխուր երգեր։ Յաջորդի առն մօտով անցնելիս ահաղին աղմուկ բարձրացրին և ցոյցեր արին, որ իմ կամքիցս դուրս էր։ Պատահմամբ այդաեղ գտնեց և Ալէքսանդրապոլի դպրոցների հոգաբարձու Զիթողցոնց Պետրոս աղան, որ ախալցիսացոց բարկացնելու համար ասել էր. «Չեզի համար դեռ վաղ է լաւ վարժապետներ ունենալը, դա մեզի կը վայելի»։

Յիրաւի Ախալցիսայի աղաները սովոր էին հին խալֆաների, որոնք պէտք է լինէին իրանց չիբուխչին, զահուէլին, միմուր, շողոքորթը, լրտեսն ու կաւատը։ Իրանց շնորհը պէտք է ցոյց տացին իրանց տէրերի համար ուղերձներ գրելով, իսկ նրանց հակառակորդների վրայ պարսաւանք և երգիծանք։ Խալֆաների այս տիպը շարունակում է գոյութիւն ունենալ այժմ մեր գրականութեան մէջ։

Էջմիածնի և Ախալցխայի անցքերից յետոյ ինձ այլ ևս ոչ մի տեղ չէին ընդունիլ՝ համարելով խոռվար, բայց իմ՝ բախտից Ալէքսանդրապոլ հրաւիրողը Աւետիք Բարձրեանցն էր, որ շատ լաւ էր իմանում, թէ ինչ է իմ ուզածը։ Այս հանգամանքն արժանի է ուշադրութեան, և ես ուզում եմ հետեւեալ գլուխը նւիրել այս խնդրի պարզաբանութեան։

## VI

**Մեր մտաւոր վերածնութեան առաջին կարապետները** Դորապատի համալսարանի հայ ուսանողներն էին։ Սրանց յաջորդեցին Պետերբուրգի հայ ուսանողները։ Պետերբուրգի մտաւոր յեղափոխութեան շրջանում զարգացած հայ ուսանողութեան մի սուար մասը հայրենիք վերադառնալով՝ անկախ դիրք բռնեց և հասարակական գործունէութեան նսիրւեց։ Մարտիրոս Սիմէննեանցը մտաւ երսիւեան դպրոց, այնտեղից էլ ձեմարան։ Խուբէն Զալալիանցը գնաց Ագուլիս ուսուցչութեան, յետոյ եկաւ Թիֆլիս հիւրանոց բաց արաւ, որ մի տեսակ կլուք դարձաւ ժամանսկակից երիտասարդութեան համար։ Զաքարիայ Գրիգորեանցը դրախտնութ բաց արաւ և մի և նոյն ժամանսկ Գայլիանեան ուսումնարանի հիմնադիրներից և ուսուցիչներից մէկը դարձաւ։ Գէորգ Եւանդուլեանցն ձգտումէր ամենքի մենառը դառնալ։ Սենեքերիմ Արծրունին «Տեղի» վերանորոգներից մէկը դարձաւ և Գ. Արծրունու ախոյեանը հանդիսացաւ։ Գ. Արծրունին «Մշակը» հիմնեց և Մեղւական խմբի դէմ պարզեց իր դրոշակը, Գաւառներում յըրւածներն էլ իրանց շրջանում՝ հասարակական գործունէութեան նսիրւեցին։ Սրանցից մէկն էր ահա և Աւետիք Բարձրեանց, որ Ալէքսանդրապոլի դպրոցական գործի գլուխն անցաւ։

Սոյն այս խումբը գեռ ևս Պետերբուրգումն ունէր իր ապագայ դործունէութեան ձգտումը։ Այնտեղ դասագրքեր պատրաստելու հոգս էին քաշում, յօրինում և թարգմանում էին։ Հետեւում էին կրթական գործին, ուխտում էին ծառայել ազգի մտաւոր և բարոյական զարգացմանը փոխադարձ ձեռնուութեումը։ Ա. Բարձրեանցը դեռ ուսանող ժամանակ ձգտումն ունէր դառնալ բժիշկ-մանկավարժ։ Նա իր ազատ ժամերի մի մասը նսիրել էր զաստիարակչական գրւածների ուսումնասիրութեան։ Բայց յետոյ այս բաժինն իր ամուսնուն

յատկացրեց, տալով նրան ամենալաւ կրժութիւն, որից յետոյ նա դարձաւ մեր մէջ մանկական անդրանիկ պարտիզանուհին, որ իր լայն նախագիծը չըկարողացաւ ի կատար ածել իրանից անկախ պատճառով։

Ես ևս՝ զեռ Պետքը բուրգում՝ սէր ձգեցի մանկավարժութեան վրայ ու մասնաւորապէս այդ նորածիլ ու թարմ գրականութեանը նւիրւեցի։ Այդ գրականութիւնը իմ հայեցքների մէջ ահագին յեղափոխութիւն ձգեց, ամեն բանի վրայ ես սկսեցի նայել բարոյակրթական տեսակէտից, որով իմ վիպական գրածներս անգամ ստացան այդ զրոշմբ։ Նոր էին գուրս զալիս մին մինի ետևից Ֆրեսբելի, Պետաղոցցու, Դիստերէդի, Քէհրի թարգմանութիւնները և ուսու մանկավարժների ինքնուրոյն գրածները։ «Աւչիտել» (ուսուցիչ) պարբերական թերթը կարուում էինք ամենայն սիրով և հետաքրքրութեամբ, մանաւանդ նրա փորձնական դասերը զանազան առարկաներից։ Աւետիքը թարգմանում էր Մեծ-պապի թւաբանութիւնը ամենափոքր մանուկների համար, և այդ մէկ լաւ առիթ էր, որ փոքրերի մտածողութեան աշխարհը լաւ ուսումնասիրենք։ Եւ ինչքան նորանոր հոգեբանական դիւտեր էինք սնուում, որոնք սակայն շատ հնուց գտնւած էին լինում, ինչպէս ստուգում էինք յետոյ։ Բայց սրանով մեր գիտաի արժանաւորութիւնը չէր պակասում, ընդհակառակը՝ աւելի ևս բարձրանում էր, երբ աեսնում էինք, որ նոյն նկատողութիւնն արել են աւելի նշանաւոր հեղինակներ։ Պէտք է դիսենալ սակայն, որ այլ է մտածելը և այլ՝ ձևակերպել և մարմնացնել մտածած։ Մենք կարող ենք նոյն իսկ Գեոթէի և Շիքսպիրի պէս մտածել, այսինքն նրանց հայեցքներն ունենալ, բայց չըկարողանալ մեր մտածածները, մեր զգացածները, մեր ստացած տպաւորութիւնները նրանց պէս ձևակերպել, պատկերացնել, հեղինակել, վիպասաննել, բանաստեղծել, մի նկարչական յօրինածք շինել։ Ամենայն յօրինածք պահանջում է յացնի շափով տաղանդ։ Կեանքի պատկերներն ամենքս ենք աեսնում, բայց միայն տաղանդաւոր նկարին է կարողանում նոյնը պատուի վրայ պատկերացնել։

Երկար ժամանակ ես չէի խոսավանում տաղանդ ասւած բանի գոյութիւնը Պիսերեն և նմանիք՝ այդ բանը չէին ընդունում, ես էլ հաւասում էի։ Բեղքը չէր ընդունում՝ յատկութիւնների ժառանգաւոր նկարին է կարողանում նոյնը պատուի վրայ պատկերացնել։

գականութիւնը, ես էլ ինձ իրաւունք չէի համարում չըհաւատալ, բայց յետոյ այդ խնդիրը շատ արծարծւեց և պարզեց այնպէս, որ եթէ նեռքը ողջ մնար, կը խստովանէր իր սխալը։ Սրա պատճառն այն էր, որ բնական գիտութիւնները դևունոր էին ծլում և ծաղկում։ Համարարանի բնական պատմութեան բաժնի ուսանողները ոչ մի մտաւոր սնունդ չէին ստանում, այժմեան գիտութիւնը ։ ըկար Դարւին, Ֆուստ, Հել 'հոյց և ուրիշ շատերը նոր էին ծանօթացւում ուսւաց զրականութեան մէջ և այն էլ ոչ ամբողջապէս, այլ քաղաքաց միայն կամ կտոր-կոռոր, իմէ այդ կտորները կուլ էինք տալիս հում-հում։ Սեր մաաւոր պաշարը ճոխանում էր զրականութեան հետ ձեռք ձեռքի տւած։ Մանկավարժութիւնն ևս դեռ մի մշակւած սիստեմ չունէր։ Ամեն ոք ինքը պէտք է շինէր մի ամբողջութիւն, ցրւած նիւթերից մի շէնք շինելով։ Բայց մէկի շինած շէնքը միւսի համար պիտանի չէր։ Որ և է սիստեմի կուրօքէն հետևողները սովորաբար զաւրկ են լինում ինքնուրոյն մտաւոր գործունէութիւնից, որովհետեւ սիստեմի տակ լնկած մանկավարժութիւնը մասնաւոր ազանդի կերպարանք է ստանում, քարանում է և աճելութիւնից զրկւում։ Մանկավարժական ասպարիզում ինձ վիճակեց երկու իրարից տարբեր ուղղութեան դէմ պատերազմել—մի կողմից խալիքայականի և միւս կողմից կապկաբար հետևողների և թարգմանողների։ Այս ակնարկութիւնս կը պարզեի հետեւեալ գլուխներում։ այժմ թողնենք այս և երթանք Ալէքսանդրապոլ։

(Կը շարումակի)